

Այս համառօտ նկարագրութիւնը ցոյց է տալիս որ շարժումը դեռ ևս նոր է սկըսուած երկպառակութիւնն ու թշնամութիւնը դեռ այնպէս չէ զօրացել, ինչպէս մի երկու տասնեակ տարի յետոյ եղաւ: Մխիթար հաւանօրէն բերանացի քարոզութեամբ ևս պէտք է մաքառած լինէր միաբարների ազգակործան շարժման դէմ: ապա թէ ոչ անհասկանալի կլինէր այն ամբաստանութիւնը, որ Պաղոնց անում է նորա անձի դէմ:

Մահուանից երեք տարի առաջ դարձեալ մի յիշատակութիւն ունինք նորա մասին. Գ. ցուցակի № 94 ձեռագրի մէջ Մխիթարի ծառերի վերջում գրուած յիշատակարանից երևում է, որ արտագրուած է Գրիգոր արեղայի համար պատրաստուած և հեղինակի մակագրութեամբ վաւերացրած օրինակից: Մխիթար № 94 ձեռագրի օրինակի մէջ մի փոքրիկ յիշատակարանով յայտնում է նախ իւր ծառերի գրութեան թիւը՝ 25, ապա աւելացնում է. «Իսկ յետոյ մակագրեալ եղև իմով ձեռամբ ի դէմս քարախի Գրիգորի արեղայի և սուտանուն կրօնաւորի ի թվի Հայոց 229, երօրդի ի լուսազարդ անապատիս Մեծօփայ վանք առձայնելոյ, ընդ հովանեաւ մօրս լուսոյ Աստուածածնի: Եոյն յիշատակարանի բովանդակութիւնը կրկնուած է և № 1654 ձեռագրի մէջ «Եիշատակարան դժողաց հնագոյն օրինակին սորա» վերնագրով, որի մէջ յիշուած է, թէ «գըրեցաւ սա ի ժամանակս նորին Մխիթար վարդապետի, որ ինքեան ձեռամբ ուղղեալ և յարդարեալ ճշմարիտ մակագրութեամբ, զոր մերոյին աչօք տեսեալ զնա և ի խնամս զըթոյ նորին վայելեալք և իմանալի մտօք

յաստուածատուր իմաստից նորին ճաշակալք»:

Նորա մահը հանդիպեցաւ 229. = 1337 թ. Հոռի ամսի իւնիս, ուրբաթ ըստ Մկրտչի իսկ ըստ Գանիէլի նոյն թուի և նոյն ամսի ՈՍ. «յաւուր շորեքշաբաթի յետին բարեկենդանին», որ ըստ սարկաւագին է ի հինգն /'հհհի և փետրվար ԹԱ: Առաջին տարբերութիւնը գուցէ յառաջ է եկել ձեռագրիներէ մէջ և է. տառերի շփոթութիւնից, իսկ օրեքի տարբերութիւնը անշուշտ հեղինակներէց է ծագում և հաւանական է, որ Մկրտչի տեղեկութիւնը աւելի ճիշդ լինի, որպէս ականատեսի և աշակերտի: Նա թաղուեցաւ Մեծօփայ վանքի հասարակաց գերեզմանատան մէջ, որ վանքի հարաւային կողմն էր գտնուում:

Գ. Վ. Յովսէփեան:

ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ՀԵՐԵՍԻ ԵՒ ՀԱՄԲՈՑ ՄԵԹԹՐ ՎԵՐԳՊԵՏԻ.

Ամենայն նըրահայեաց պատմութիւնք ասացեալ և շարագրեալ եղեն յաստուածայնոց ոմանց և սրբոց հարցն և ի վարդապետացն առաջնոց և առընթեր նոցին յիշատակք նոցա մակագրեալ իցեն, թէ յորո՞ց ազգաց իցեն և կամ յորմ աշխարհէ և յորմ տեղւոյն և թէ յորպիսո՞ւմ ժամանակի խօսեցեալ և յարմարեալ իցեն աստուածայն բանք վարդապետութեան նոցա:

Արդ, կարևոր համարեցաք և մեք սակաւ ինչ զերանելի սուրբ հօրս մերոյ Միխրայոյ տիեզերալոյս վարդապետի զսկիզբն և զկատարումն կենաց նորա ընդ գրով արկանել, թէ յորմ

այ հանգանակը, որ տեղ տեղ տարբերութիւններ ունի ներկայ հաւատամքից. բ) Յարութեան Գձ շարահանից մի առն. Արարիչդ արարածոց Քրիստոս, այսաւր ի խաչին բեռեցեաք և զինուորն գեղարդեամբ յարձակեալ զկողքո խոցեաց Տէր Կստուած... գ) Վկայութիւններ և բտացի քաղաւաններ կան Պետրոս Ազիպտացու և Ակակոսի թղթակցութիւններից. այս վերջին կէտի համար նշանակութիւն ունի և 15 ճառերից Բ.-ը:

* Մի դար յետոյ՝ Պ29=1435 թ. Թովմա Մեծօփեցին մի յիշատակարանի մէջ (№ 1403) յիշում է Մխիթարի դամբարանը Մեծօփայ վանքի նշանաւորագոյն վարդապետների հետ. «Արդ գրեցաւ գիրս յերկիրս Քաջբերունեաց, յանապատիս Աստուածածնի, առ դամբարանի բրիտառնեակ վարդապետացն սրբոց Աստուածատուր և Միխրայոյ Մոփօսի»:

ժամանակի էր, և սա ո՞վարժեցու և ո՞յք էին ուսումնակիցը սորին և թէ որպէ՛ս գժամանակս միջին հասակին եկաց և թէ որպիսի՛ բաջութեամբ և արխութեամբ զընթացս իւր կատարեաց:

Ի թագաւորութեանն՝ աղզին նետողաց Խարքանդին և որդւոյ իւրոյ Բուսայիտի ամբարշտաց և հայածչաց և ի թագաւորութեանն Հայոց յաշխարհին Սիլիկեցոց Օշնի և որդւոյ նորին Լևոնի և ի կաթուղիկոսութեան Տէր Յակոբու Անաւրդեցոց, իսկ յաւաջնորդութիւն աթուոյն Աթթամարոց Տիւանն Չարարիայ:

Արդ, ի այցու ժամանակս էր երիցս երանեալ սուրբ հայրս մեր և սատուածաշնորհ մեծ վարդապետս Մխիթար, զուով ի դաւաւէն Քաջբերունեաց, ի դեղջէ Աերմանեց, սրզի բազարշտ ծնողաց: Եւ ի վախճանիլ հօր և մօր իւրոյ՝ սամոցեալ երանելիս Մխիթար պատանի իւր տաննամեայ աւելի ինչ կամ պակաս և ընկալեալ զսա կրօնաւոր ոմն աղգահան նորին, որոյ անուն Անդրէաս կոչեցեալ և ուսուցեալ նմա զիւր և զպրութիւն: Բայց նա ոչ ըստ օրինակի մանկանց յաշխարհական իրս և ի զբօսանս պարսպեալ, այլ կարի յոյժ մտազիւրութեամբ և յօժարութեամբ ընթեռնայր զսուրբ գիրս, և մինչդեռ անկատար դուով ի հասակ մարմնոյ, ժամանէ յիմաստուն և անախտական եպիսկոպոսն տէր Խաչատուր հայեցեալ ընդ նորս ամենաշնորհ աջորդութիւնն՝ ձեռնադէմ զնա քահանայ:

Իսկ նա՞ ըստ սուեցելոյ նմա իմաստութեանն՝ սկիզբն սուսէ ստուածաշունչ գրոց կրթութեան, ուստի բարբոցեալ եղև ի նմա հուր ստուածային սիրոյն և ոչ կարէր հանդչել, զոր և ինքն իսկ պատմեաց մեղ, և եռայր հոգի նորս ի նմա և ինդրէր ուսուցիչ և վարդապետ, զի վարժեցել նաքօք, զի յայնմ ժամանակի ոչ գոյր վարդապետ յերկիրն Քաջբերունեաց: Եւ նա վասն տղայական հասակին և անկատար գոյոյն պատկաւէր ևս ուրեր երթալ, զի դեռ ևս մուրօք ոչ ևս էին բուսեալ յերեսս նորս: Եւ քաջալերեալ ուսումնակցաց իւրոց՝ որոց անուանքն Սեփաննոս և Յովնաննիս կոչեցեալ, զորս և յիշէ ի սոյն մատենի, և սաւաջնորդ աւեալ զՀոգին սուրբ, գնայ յԱլքարատեան գաւառ ի գերադաս սուրբ Ամենայն Հայոց, ի մայրն հաւատոյ և ի գլուխն ամենայն եկեղեցեաց Հայկազանց, յարում էջ Աղղին Միսթին և ստիկ ուսումնն բոխեաց զսանդարտեալ անգնդոց, և սնդ սղջանեալ սուրբ տեղեացն և անտի զնացեալ ի գաւառն կոչեցեալ Սայցճոր, ի վանսն որ այժմ կոչ ի Քլաճոր սո գերակատար և սուրբ վարդապետն Ներսէս և կացեալ անդ ընդ նմա ամս երեք:

Յայնժամ զան հասունն անդ ուսումնակիցը սորս, զորս վերադոյն ստացար: Յայնժամ երանելիս Մխիթար յոյժ ուրախ եղև ի գալ ընկերաց իւրոց և լինել նմա օգնական և լծակից յամենայն գործս բարութեան և ի հարցաբնութիւնս Աստուածաշունչ մատենից: Վասն զի ի հարցաբնութեանց անտի ոչ միայն ստուածային խոյք իմաստիցն յայանեալ երեկն, այլ սուսեւ ևս ի միտս և ի հոգիս հաստատեալ և միացեալ լինին, զի ուր ոչ է ըննութիւն, և ոչ կատարեալ իմաստութիւն:

Իսկ սուրբ վարդապետն ներսէս մեծաջան ճգնութեամբ և բարի վարուր մահուամբ փոխի սո Քրիստոս և յաջորդէ զաթոռ վարդապետութեան նորս նաչոյսս աշակերտ նորին, և սուրբ վարժեցան նովա զամս բաղամս: Բայց երանելիս Մխիթար գերադոյն գոյով քան զամենեսեան յիմաստս գիտութեան, ուսեալ զհին և զնոր կտակարանս և յոյժ հմուտ եղեալ փիլիսոփեականն արճեստից, և քան զյորունս գերականցեալ շնորհօք գիտութեան և եղեալ ի սրտի իւրում հեռանալ յաշխարհէ և սուսնձնտիան կեանս ստանալ և ոչ վարդապետական անուամբ ճոխանալ: Եւ մեր զայստակ ի նմանէ տեղեկացեալ զիտացար: Եւ գալ ի գաւառ իւր և այնպէս կացեալ սուրբս ինչ, և պատահեալ նմա վարդապետ ոմն Թարեոս անուն, և գտեալ զնա ընդունարան ստուածային իմաստութեանն և հարկեցուցեալ զնա խրատելով և աղաչանօք, սոյ նմա հրաման վարդապետել ի մէջ եկեղեցոյ ոչ զբանն կենաց: Բայց սա կացեալ սակաւ ժամանակս և ոչ հաճեալ ընդ եղեալ իրսն, զի ոչ է պարս և իրաւացի, առ, ևս այլ ամանս վարժել և յայլոյ ու մեծնէ վարդապետական հրաման ընդունել: Երթայ դարձեալ սո մեծ վարժական Եսայիաս և ընկալեալ ի նմանէ վարդապետական հրաման և դարձեալ գայ ի բնական գաւառն իւր յերկիրն Քաջբերունեաց և մեծապայծառ պատուեալ ի քաղաքացեացն Արճիշոյ և ի գաւառականացն յաղաղս լուսախոյ իմաստութեան նորս: Քանզի լուսաւորէր զամենեսեան բանի վարդապետութեան իւրոյ և հայբարար մխիթարէր զեկեալսն սո ինքն ուղղելով զամենեսեան ի գործս բարութեան: Եւ բնակութիւն իւր արարեալ զեկեղեցիայեց և զստուածաբանական անապատն, որոց անուն Մեծոփոյ վանս սո ճայնիւր, և անդ գողարեալ զամենայն սեռս ինկենաց իւրոց, հրաժարեալ յամենայն կենցաղական պատրոզական կրթից և գարդարեալ ամենայն սաւաքնութեամբ և գործովք բարեաց: Եւ սուսեւ զողորմածութենէ բուռն հարեալ, որ սո սուրբ և պանդուխտ, զի զվաստակս ձեռաց իւրոց և զոր ինչ յայոց շահեալ լինէր, զամեն-

նայն աղբատաց և կարօտելոց բաշխէր: Զի յոյժ վարժ գորով և ի ծաղկազարդ նկարահեր-
տութիւնս զբոց, զի հայր սրբոց և դատաւոր
այրեաց եղեալ ըստ մարդարէին ի մերումն ժա-
մանակի:

Եւ արդ ի ժամանակս սորին բարեբար-
ւոյ և աստուածասիրի անձին յամենայն աեղիս
կուսութիւն յարդեալ պատուեցաւ և բազումք
ի նախանձ աստուածպաշտութեանս այսորիկ կո-
չեցան սրբութեամբ և մաքրութեամբ: զանձինս
իւրեանց բնծայիցին Քրիստոսի և արժանաւորք
եղեն միւլց առաջաստի երկնաւոր փնային:
Եւ յերկնային վտակաց արբեալ և առաքե-
լաշնորճ եղեալ և աղօթիք և խնդրուածովք
սկիզբն արարեալ աստուածային մատենիս այսո-
րիկ և աւարտեալ հաւաքեաց զսա վիպութեամբ
աստուածաշունչ մատենից, խօսեցաւ ճառս
տասն և հինգ: Եւ հնգէտասան ճառիւքս այսո-
քիւք բովանդակեաց զամենայն բարեկործու-
թիւնս և զմատոտ դիտութեան իբրև զբուրա-
տան վայելուչ զանաքան ծաղիօք դարգարեալ
առ ի յօդուս և ի շահ ուսումնասիրաց ման-
կանց սրբոյ եկեղեցւոյ: Աւնիմք և արաքոյ սո-
րին այլ ևս բանք երանելոյս արարեալ զմեկ-
նութիւն երեքին թղթոցն կաթողիկեաց սուրբ
և աստուածաբան աւետարանչին Յովհաննու:
Ընդ նոսին և զմեկնութիւն հանգստեանն նորին
Յովհաննու աւետարանչի: Աւնիմք և խօսս նորս
ի վերայ ասմարի շարաբարտին Լևոնի մեկնապէս
եղեալ ըստ իւրոյ արժանաւորութեանն:

Չայստիկ յեկեղեցի Քրիստոսի թողեալ յե-
շատակ յեա իւր կենդանի և ինքն գնաց ի միշտ
կենդանեաց քաղաքն անմահից, սրում տենչա-
ցեալ փափաղեաց հազում տեսանել զընդս անձա-
ռելի և ուրախանալ յաւէա խանդակաթ սիրովն
Յիսուսի: յոյժ բազմութեամբ զընթացս իւր կա-
տարեալ արևորեալ լի աւուրքք: Եւ մերձ ի վախ-
ճանն իւր պատմեաց մեզ տեսութիւնք երազոց,
որ զհանգիսան իւր գուշակէին:

«Տեսանէի» ասէ, յանուրջս գիշերուոյ՝ զի էի
յեզր գետոյ միոյ, և զեան յորդեալ դայք անա-
ղին և ունէր ի վերայ ինքեան խնձոր մի սոկի
մեծ և զեղեցիկ. և բազում անդամ ջանացայ
հանել զնա և ոչ կարացի: Եւ յեա սակաւ
աւուրց ասէ. «Տեսանէի յերազի» զի ըստ սրբոյն
Յակովբայ սանգուղք եղեալ էր յերկրէ յերկինս
և բազումք երանէին քնդ նոյն և ևս քնդ նոսս: Եւ
գարձեալ այլ ևս աստութիւն անըջական
երազոյ, զոր պատմեաց առ ի զուարճութիւն և
ի հաստատութիւն յուսոյ ամենայն հաւատացե-
լոց: «Տեսանէի» զի ամենայն ազգք քրիստանէից
լաւ ունէին բարձեալ ի ձեռս իւրեանց և հոր-

զան տուեալ խուռն յարեկոյ բնթանային ի հան-
դելպումն երկնաւոր փնային Քրիստոսի, որոց
և զիս առեալ ընդ իւրեանս տանէին »:

Եւ յեա այսորիկ փոխի մահուամբ առ
Քրիստոս ի թուականութեանս 229. յամենանն
Հոռի Իլ: յաւուր ուրբաթու: որոյ և պատուա-
կան մարմինն եղեալ կայ ի նոյն վանս Մեծոփոյ
ընդ հասարակաց գերեզմաննս որ է ի հարաւոյ
կողմանէ անապատին ի փառօ Քրիստոսի: Աս-
տուծոյ մերոյ:

ԶՍտեփաննոս վարդապետ զհոգեւոր հարա-
զատ նորին և զանարժան Միքայիլ, որ շարազրեցի
դսակաւ պատմութիւնն, պողպատան մերքնձա-
յեմ՝ յիշել զմեզ առ Տէր Յիսուս Քրիստոս, իբրև
թէ ներումն յանցանաց և թողութիւն մեզոց
արացէ Քրիստոս Աստուած մեր, որում փառք
և երկրպագութիւն ընդ Հօր և սուրբ Հօգւոյն
յաւիտեանս Ամէն:

— ԶՄոյսէս լցեալս ամենայն անօրէնու-
թեամբ ազաչեմ յիշել ի Քրիստոս:

ՄԱՐՏ Է ԱՊՐԻԼ

ՄԱՐՏ Է ԱՊՐԻԼ